Քաղաքացիական գործ՝
ԵԴ/44435/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

01.09.2022թ.

ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զ. Նախշքարյանս, քննության առնելով «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղականի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 08.06.2022թ. կնքված «ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-22/1» ծածկագրով գնման պայմանագիրը Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մ.Սարգսյանի կողմից միակողմանի լուծելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը

ՊԱՐԶԵՑԻ

«ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ս.Զաքարյանի, 26.08.2022 թվականին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղականի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 08.06.2022թ. կնքված «ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-22/1» ծածկագրով գնման պայմանագիրը Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մ.Սարգսյանի կողմից միակողմանի լուծելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը նույն օրը մակագրվել է դատավոր Զ.Նախշքարյանիս և հանձնվել աշխատակազմին 29.08.2022 թվականին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121, 122 հոդվածների, 27.2 գլխի պահանջների պահպանմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125 և 199, 211 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղականի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 08.06.2022թ. կնքված «ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-22/1» ծածկագրով գնման պայմանագիրը Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մ.Սարգսյանի կողմից միակողմանի լուծելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ Զ. ՆԱԽՇՔԱՐՅԱՆ